

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆՆ ՈՒ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ (ԱՄՐԱՑՎԱԾ), ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ (ՎԱՃԱՌՔԻ) ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական կառավարման համակարգի մարմինների (այսուհետ՝ պետական մարմին) տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի, պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն), պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ ընկերություն), հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող և կազմակերպությունների սեփականություն հանդիսացող գույքի (այսուհետ՝ պետական գույք) վաճառքի աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Պետական գույքի աճուրդով վաճառքը կատարվում է այն դեպքում, երբ գնորդից չի պահանջվում որևէ պայմանի կատարում:

3. Պետական գույքի աճուրդով վաճառքի դեպքում, բացի մեկնարկային գնից, այլ գնային սահմանափակումներ չեն կիրառվում:

4. Պետական գույքի աճուրդով վաճառքի դեպքում իրավական ակտով սահմանվում են վաճառվող գույքի մեկնարկային գինը և աճուրդի իրականացման ժամկետները:

5. Պետական գույքի աճուրդով վաճառքն իրավական ակտով սահմանված ժամկետում (այդ թվում՝ էլեկտրոնային) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան կազմակերպում և անցկացնում է պետական գույքի կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրենի հրամանով ստեղծված աճուրդի հանձնաժողովը (այսուհետ՝ կազմակերպիչ):

2. ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

6. Կազմակերպիչը պետք է կազմված լինի առնվազն 6 անձից, որի կազմում ընդգրկվում են ՊՈԱԿ-ի (հանձնաժողովի նախագահ, հանձնաժողովի քարտուղար, երկու անդամ), լիազոր մարմնի (մեկ անդամ), կազմակերպության կառավարումն իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի, կազմակերպության, ընկերության և հիմնադրամի (մեկ անդամ) ներկայացուցիչներ:

7. Պետական գույքի աճուրդ կազմակերպելու վերաբերյալ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպիչը 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է գույքի վաճառքի աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցման տեքստը, որը հրապարակում է նաև իր կայքում և 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է լիազոր մարմնին՝ հրապարակելու համար:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցմանը սահմանված ժամկետում կազմակերպիչն ընդունում է աճուրդի մասնակցության հայտերը, կազմում և անցկացնում է գույքի վաճառքի աճուրդը, ինչպես նաև որոշում գույքի վաճառքի աճուրդի հաղթողին:

9. Կազմակերպչի գործունեությունն իրավազոր է կազմակերպչի անդամների թվի 2/3-ի մասնակցության դեպքում: Աճուրդի անցկացմանը մասնակցող կազմակերպչի գործունեությունն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին ծանուցվում են

աճուրդի մասնակցության հայտ ներկայացրած բոլոր անձինք՝ հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետներում:

11. Կազմակերպչի գործունեությունը համարվում է դադարած՝ աճուրդի վերջնական արդյունքներն ամփոփվելուց և դրա մասին արձանագրությունը լիազոր մարմնի ղեկավարի հաստատմանը ներկայացվելուց հետո:

3. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

12. Պետական գույքի վաճառքի աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է հրապարակվի աճուրդի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ՝ լիազոր մարմնի պաշտոնական և www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքերում:

13. Պետական գույքի վաճառքի աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- 1) աճուրդի անցկացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը.
- 2) աճուրդի կազմակերպչի անվանումը.
- 3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն).
- 4) աճուրդը չկայանալու դեպքում՝ վաճառքի մեկնարկային գնի նվազման չափը.
- 5) աճուրդի ձևը և անցկացման կարգը.
- 6) աճուրդով վաճառվող գույքի անվանումը, գույքի որակական և քանակական պայմանները (անշարժ գույքի դեպքում՝ հասցեն (գտնվելու վայրը), մակերեսը և այլն).
- 7) աճուրդի պայմանները, այդ թվում լոտի (լոտերի) անվանումը (անվանումները), լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմաններ.
- 8) աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես՝
 - ա. նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը,

բ. մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը,

գ. իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,

դ. հայտատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը)։

9) աճուրդում հաղթողին որոշելու կարգը.

10) կազմակերպչի կողմից սահմանված մասնակցության վճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.

11) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.

12) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լոտերի վաճառքի հերթականությունը.

13) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը.

14) աճուրդի նախավճարի չափը (նախավճարի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող ամենաբարձր մեկնարկային գին ունեցող լոտի գնի հինգ տոկոսը), ինչպես նաև նախավճարի վճարման կարգը և ժամկետները, աճուրդում հաղթող չճանաչվելու դեպքում նախավճարի վերադարձման կարգը:

14. Պետական գույքի վաճառքի աճուրդի մասնակցության հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդն սկսվելուց առնվազն երեսուն րոպե առաջ, եթե աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

15. Պետական գույքի վաճառքի աճուրդի պայմանների փոփոխման դեպքում կազմակերպիչն օրենքով սահմանված կարգով պարտավոր է աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ անհապաղ կատարել համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ այն ձևով, ինչպես կատարվել է գույքի վաճառքի աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները: Գույքի վաճառքի աճուրդի

էական պայմանների փոփոխման դեպքում անհրաժեշտ է կատարել նոր հրապարակային ծանուցում՝ նախկին ծանուցումը չեղյալ հայտարարելով, որի մասին անհատապես տեղեկացնել արդեն իսկ մասնակցության հայտ ներկայացրած անձանց:

4. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

16. Պետական գույքի վաճառքի աճուրդի մասնակցության հայտերը ներկայացվում են գույքի աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցման մեջ նշված հայտերի ընդունման վայրում և ժամկետում:

17. Պետական գույքի վաճառքի աճուրդի մասնակցության հայտերը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են անձամբ փոստով՝ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային հասցեով:

18. Սույն կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո ստացված հայտերը չեն քննարկվում:

19. Պետական գույքի վաճառքի աճուրդի հայտատուները հրապարակային ծանուցմամբ սահմանված կարգով, չափով ու ժամկետներում վճարում են գույքի վաճառքի աճուրդի մասնակցության նախավճար՝ կազմակերպչին:

20. Պետական գույքի վաճառքի աճուրդին մասնակցության իրավունք ձեռք բերած սուբյեկտները գնում են մասնակցության վճար, որում նշված համարով հանդես են գալիս աճուրդում:

21. Պետական գույքի վաճառքի աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար կարող են վաճառվել դիտորդի տոմսեր:

22. Մասնակցի և դիտորդի տոմսերի վճարի մեծությունը սահմանվում է ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանով:

23. Պետական գույքի վաճառքի աճուրդի մասնակցի տոմսերի վաճառքը դադարեցվում է աճուրդն սկսվելուց առնվազն երեսուն րոպե առաջ, իսկ դիտորդի տոմսերի վաճառքը շարունակվում է ընդհուպ մինչև գույքի վաճառքի աճուրդի սկսվելը:

24. Պետական գույքի վաճառքի աճուրդին կարող են մասնակցել հայտ ներկայացնողները կամ նրանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձինք:

25. Պետական գույքի վաճառքի աճուրդում հաղթող ճանաչված հայտատուի վճարած նախավճարը ներառվում է մասնակցի կողմից առաջարկված գնման գնի մեջ:

26. Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի (լոտերի) գինը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին:

27. Աճուրդի արդյունքների ամփոփման մասին արձանագրությունն ստորագրելուց հետո կազմակերպիչը գույքի աճուրդում հաղթող ճանաչված անձին տրամադրում է լոտի գնի վճարման հանձնարարագիր, որով սահմանված ժամկետում կատարում է վճարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին ու վճարման անդորրագիրը ներկայացնում կազմակերպիչին:

28. Սույն կարգի 26-րդ և 27-րդ կետերով սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից վճարված նախավճարը չի վերադարձվում՝ աճուրդը համարվում է չկայացած, իսկ վճարված նախավճարը կազմակերպիչի կողմից փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին: Ընդ որում, եթե աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման: Տվյալ մասնակիցը հայտարարված գույքի նոր աճուրդին չի կարող մասնակցել:

29. Աճուրդի կազմակերպիչը նախավճարը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

5. ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

30. Աճուրդն անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով:

31. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին:

32. Յուրաքանչյուր գնորդ կարող է գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով:

33. Աճուրդավարն աճուրդը շարունակում է այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ թեկնածու, որից հետո աճուրդը դադարեցվում է:

34. Հայտարարված գնով գույքը ձեռք բերելու համաձայնություն չլինելու դեպքում աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը: Գույքը մեկնարկային գնով երեք անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում աճուրդը համարվում է չկայացած և դադարեցվում է:

35. Գույքի առավելագույն արժեքն առաջարկած թեկնածուն աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելուց հետո ճանաչվում է աճուրդի հաղթող և պարտավոր է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսն ու վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ վաճառքի հատուկ հաշվին: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:

36. Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում են հաղթողի (գնորդի) կողմից վճարման

ենթակա գումարի մեջ և աճուրդի կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին:

37. Եթե աճուրդում հաղթողը չի կատարում սույն կարգի 34-րդ կետի պահանջները, ապա նրա մուծած նախավճարը չի վերադարձվում և աճուրդը համարվում չկայացած, վաճառքի նպատակով հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով, առանց մեկնարկային գնի նվազման:

38. Կազմակերպիչը մեկօրյա ժամկետում աճուրդի արդյունքների ամփոփման մասին կազմում է արձանագրություն: Կազմակերպչի անդամի հատուկ կարծիք լինելու դեպքում այն ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

39. Կազմակերպիչը աճուրդի արդյունքների մասին կազմված արձանագրությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է լիազոր մարմին:

6. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶԵԼԸ

40. Պետական գույքի աճուրդը համարվում է չկայացած, եթե՝

1) աճուրդի հաղթողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը սահմանված ժամկետում չի ստորագրել աճուրդի արդյունքների արձանագրությունը կամ չի կատարել վճարումը, կամ հրաժարվել է գույքը ձեռք բերելուց, կամ չի կնքել պայմանագիրը.

2) աճուրդին չի ներկայացել ոչ մի գնորդ.

3) արտակարգ իրավիճակի պատճառով անհնար է դառնում աճուրդով նախատեսված աշխատանքների կատարումը:

41. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել դատական կարգով: Դատական կարգով աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է աճուրդի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրի անվավերությանը:

42. Եթե աճուրդը համարվում է չկայացած, ապա այդ դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվում է նոր աճուրդ, գույքի վաճառքի նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման:

7. ԱՃՈՒՐԴԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

43. Կազմակերպիչը կազմում է գույքի աճուրդով վաճառքի մասին արձանագրությունը, որն աճուրդի անցկացումից հետո ստորագրվում է գնորդի և վաճառողի կողմից:

44. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցին տրվում է վճարման հանձնարարագիր՝ 2 օրինակից, որոնցից մեկը մնում է կազմակերպչի մոտ: Վճարման հանձնարարագրում նշվում են գնորդի կողմից մուծման ենթակա գումարի չափը, մուծման վերջին ժամկետը:

45. Աճուրդի արդյունքների վերաբերյալ որոշումն իրավաբանական ուժ է ստանում լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատվելուց հետո և հիմք է ծառայում գույքի նոր սեփականատիրոջ հետ վաճառքի պայմանագիր կնքելու համար:

46. Աճուրդի հաղթողը պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը:

47. Գույքի գնորդը պարտավոր է 30 օրվա ընթացքում լիազոր մարմնի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր: Գույքի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված՝ իրավունքի գրանցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ